# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Տեքստիլ Փիփ ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 22 | Ապրանքները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. N 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևերին (նկարներին) համապատասխան: Տարազաբաճկոն` ուսադիրներով (տղամարդու), արդարադատության մայորից մինչև գնդապետի կոչում ունեցող դատական կարգադրիչների համար (Ձև 6): Կարվող ուսադիրներով, որը պատրաստվում է մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ, թույլատրելի շեղում` +, - 2%), բնական մետաքսե աստառով (8-C5-BШ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100գ/մ2 խտությամբ, թույլատրելի շեղում` +, - 2%), կտորի և աստառի միջև որակյալ ներդիրով (խոլստով), իսկ օձիքը և թևածալքերն ունեն մուգ կարմիր եզրաշերտ` 2,5 մմ լայնությամբ (2581 արտիկուլի մահուդե կտորից): Թևածալքերի վրա առկա են երեք կոճակներ: Տարազաբաճկոնը երկփեղկանի և երեք կոճականի է, թիկնամասի ներքևում առանց կտրվածքի, իսկ օձիքի վրա ամրացվում է դատական կարգադրիչների ծառայության խորհրդանշանը: Տարազաբաճկոնը կոճկվում է աջ կողմից: Ձախ թևքին առկա է թևքանշան (Ձև 20), իսկ աջ թևքին ՀՀ դրոշ` նշված որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան: Նախքան տարազաբաճկոնների պատրաստումը տարազաբաճկոնների գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Տարազաբաճկոնների ամբողջ քանակը պետք է պատրաստվի միևնույն գործվածքից: Ընդ որում, նախապես (մինչև տարազաբաճկոնների կարելը) Վաճառողը Գնորդին է ներկայացնում նշված գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ապրանքների |

| | |
|---|---|
| | փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, պարկերի վրա պետք է նշված լինեն անվանումները ըստ վերցված անհատական չափսերի, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինեն ապրանքի անվանումը, քանակը, չափսերը: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին, նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Текстиль Пип в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 22 | Товары изготавливаются в соответствии с критериями и образцами (фотообразцами), утвержденными постановлением Правительства Республики Армения N 1517-A от 20.12.2018г. Китель с погонами (мужской), для судебных приставов, имеющих звания от майора до полковника юстиции (Фотообразец 6). С пришивными погонами, изготавливается из темно-синей полушерстяной ткани (шерсть 67%, полиэстер 33 %, плотностью 317 г/м2, допустимое отклонение: +, - 2%), с натуральной шелковой подкладкой (из артикула 8-C5-ВШ темно-синей ткани плотностью 100 г/м2, допустимое отклонение: +, - 2%), с качественной прокладкой между тканью и подкладкой (с холостом), а воротник и манжеты имеют темно-красную окантовку шириной 2,5 мм (из суконной ткани 2581 артикула). На манжетах имеются три пуговицы. Китель двубортный, на три пуговицы, без разреза в нижней части спинки, на воротнике крепится символ службы судебных приставов. Китель застегивается справа. На левом рукаве есть шеврон (Фотообразец 20), а на правом рукаве флаг РА в соответствии с требованиями, установленными указанным постановлением. До изготовления кителей цветовая гамма кителей согласуется с Покупателем. Полное количество кителей должно изготавливаться из одинаковой ткани. При этом, заранее (до шитья кителей) Продавец представляет Покупателю выданное аккредитованной в РА организацией заключение лабораторного исследования о составе, категории, стабильности краски и поверхностной плотности указанной ткани. Упаковка товаров - в полиэтиленовых прозрачных пакетах, на пакетах должны быть отмечены наименования, согласно взятым индивидуальным размерам, маркированные, на марках должны быть отмечены |

| | |
|---|---|
| | наименование, количество, размеры товара. Перевозку и разгрузку товаров осуществляет Продавец, за счет своих средств, заранее согласовав с Покупателем конкретный адрес поставки. |